ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՄԱՆ

Հոդված 14.9. Բողոքարկման կարգը

1. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի արդյունքներում շահագրգռվածություն ունեցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի, սույն օրենքի համաձայն, դատական կարգով բողոքարկելու իրավասու մարմնի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները՝ համապատասխան գործողությունը կատարելու (անգործություն ցուցաբերելու) կամ որոշումը կայացնելու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում:

2. Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի, այդ թվում՝ բողոքի քննարկման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

(14.9-րդ հոդվածը լրաց. 30.06.21 ՀՕ-284-Ն)

(30.06.21 ՀՕ-284-Ն օրենքն ունի անցումային դրույթ)